ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-26/12 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով՝
ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար ՀՀ դրոշների և զինանշանների ձեռքբերման նպատակով գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 05.05.2026թ. ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Թորոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Տ.Ղազարյան*, Վ.Քեռյան, Ա.Դարբինյան, Գ.Ավետիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Սաղաթելյան

*Նիստից բացակայում է Տ.Ղազարյանը

1. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրեր/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով eauction.armeps.am համակարգի (այսուհետ նաև՝ Համակարգ) կողմից 1-3 չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ԱՐՍԾԻՆ 91 ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/, արձանագրեց՝

- ԱՐՍԾԻՆ 91 ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի հայտում առկա են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝

- էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում՝ /այսուհետ՝ Հավելված 1/ բացակայում է Մասնակցի ղեկավարի պաշտոնը: Հավելված 1-ում Մասնակիցը հայտնել և հավաստել է, որ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ, սակայն հայտում բացակայել է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ համաձայն հավելված 1.3-ի: Հավելված 1-ը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

- eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժնում «Ապրանքային նշան», «Արտադրող» սյունակները ենթակա են շտկման, նշված է <x>, <x>, սակայն անհրաժեշտ է նկարագրել /նշել/ առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը և արտադրողը: «Տեխնիկական բնութագիր» սյունակում 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժնում նշված է < x >, անհրաժեշտ է eauction.armeps.am համակարգի միջոցով նշել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, Հանձնաժողովը որոշեց 05.05.2026թ. նիստը կասեցնել՝ Համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ ԱՐՍԾԻՆ 91 ԳՐՈՒՊ ՍՊԸ-ին; առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 07.05.2026թ. ժամը 10:00-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝0:

Հանձնաժողովի

Նախագահ _____ Վարդան Թորոսյան

անդամներ՝ _____ Վազգեն Քեռյան

_____ Արսեն Դարբինյան

_____ Գրիգոր Ավետիսյան

քարտուղար՝ _____ Հերմինե Սաղաթելյան